



Անկախ լրագրության հիմնադրամի (Independent Journalism Foundation, IJF) այս հրապարակության հայերեն տար-  
բերակը պատրաստել է Տարակարծիք ԶԼՄ-ների ինստիտուտը (Media Diversity Institute, MDI)

Գրքի անգլերեն հրապարակությանն առնչվող ցանկացած հարցով դիմել՝

Independent Journalism Foundation  
40 East 75th Street - Suite 3A  
New York, New York 10021  
Tel: +1 212 535 7874  
Fax: + 1 212 535 0002  
E-mail: [mnw@ijf-cji.org](mailto:mnw@ijf-cji.org)  
Website: [www.ijf-cji.org](http://www.ijf-cji.org)

կամ՝

Media Diversity Institute,  
100 Park Village East, London NW1 3SR, UK  
Tel: +44 207 38 00 200  
Fax: +44 207 38 00 050  
Email: [info@media-diversity.org](mailto:info@media-diversity.org)  
Website: [www.media-diversity.org](http://www.media-diversity.org)



Այս հրապարակությունն իրականացվել է Եվրոպական Նամայնքի ֆինանսական օժանդակությամբ: Այսպեղ ար-  
տահայտված տեսակետները պատկանում են Անկախ լրագրության հիմնադրամին ու Բազմակոմանի  
տեղեկատվության ինստիտուտին և որևէ դեպքում չեն կարող Եվրոպական Նամայնքի պաշտոնական կարծիք դի-  
տարկվել:

### *Երախտագրություն*

Անկախ լրագրության հիմնադրամը և ձեռնարկի **անգլերեն հրատարակության** խմբագիրը շնորհակալություն են հայտնում Բենթոնի հիմնադրամին (Benton Foundation), Նադորդակցության ռազմավարական միջոցների կենտրոնին (The Center for Strategic Communications) և Նադորդակցության միջոցների կոնսորցիումի լրարվական կենտրոնին (Communications Consortium Media Center)՝ իրենց կազմած «Նադորդակցության ռազմավարական միջոցները՝ շահույթ չհերապանող կազմակերպություններին» (*Strategic Communications for Nonprofits*) լրարվական ուղեցույցների շարքից ծավալուն մեջբերումներ անելու թույլտվության համար:

Թեպետ նման նյութերը հղումներով չենք առանձնացրել, սակայն առավել հաճախ օգտվել ենք այդ ուղեցույցներից երկուսից: Դրանք են՝ «Ռազմավարական ԶԼՄ-ներ. հանրային նշանակության բարոգաբաշխների նախագծումը» (*Strategic Media: Designing a Public Interest Campaign*, հեղինակային իրավունքը՝ Նադորդակցության միջոցների կոնսորցիումի լրարվական կենտրոնի, 1991թ.) և «Լրարվական բարոգություն» (*Media Advocacy*, հեղինակային իրավունքը՝ Բենթոնի հիմնադրամի):

Այս շարքի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկությունների, այդ թվում՝ ձեռքբերման համար կարող եք դիմել Բենթոնի հիմնադրամին. The Benton Foundation, 1710 Rhode Island Avenue, NW, 4<sup>th</sup> Floor, Washington, DC 20036; (202) 857-7829:

Օգտակար է եղել նաև Միացյալ Նահանգների տեղեկարվական գործակալության (United States Information Agency, USIA) հրատարակած «Լրարվական ուղեցույց կանանց համար. գրիր քո ձայնը հասարակության մեջ» գիրքը (*A Media Guidebook for Women: Finding Your Public Voice*, 1995), որի մասին կարող եք տեղեկանալ ձեր երկրում ԱՄՆ դեսպանատնից:

Մեր երախտագրությունն ենք հայտնում նաև Ամերիկայի հասարակական կապերի միությանը (Public Relations Society of America, PRSA)՝ այդ կազմակերպության Վարքականունն իրրև առանձին հավելված (Նավելված Թ-) վերաբարելու թույլտվության համար:

41	թ) Տեսակեր արտահայտող նյութեր. օփ-էդ
44	ժ) Նարցագրույցներ.ինչ է ձեզ անհրաժեշտ գիտննալ
51	ժա)Լրարավամիջոցների արտադրությունը և տրամադումը

## 5.

52	<b>Լրարվական ռազմախաղական քայտգաղչալներլի պլանաալորտանը</b>
53	ա) Կազմակերպչական պարտավորություններ
57	բ) Որոշեր քարոզաղչալի քաղաքականությունը և լրարվական նպարակները
58	գ) Լսարանը
59	դ) Նպարակայլին ՁԼՄ-ները
60	ե) Ասելլիքի, ողերձի մշակումը
64	զ) Ինղիրը ներկայացնողների, բանախոսների ընարությունը
65	է) Գործիքները, միջոցները
66	ը) Մարտավարությունը. ռազմավարական պլանի նախագծումը
68	թ) Ժամանակացույցը

## 6.

70	<b>Մեկնարանություն ՁԼՄ-ների հեր հարարերությունների շորջ</b>
----	---

## 7.

74	<b>Նալկելվաձներ</b>
75	ա) Ինչպես սկսել
78	բ) Ընղհանոր տեղեկություններ կազմակերպության մասին
88	գ) ՁԼՄ-ներից ստացվող զանգեր
89	զ) Մամուլի ասուլիսներ
91	ե) Մամուլի համար նախապեսվաձ նյութերի փաթեթներ
92	զ) Մամուլի ճեպագրույցներ
94	է) Նեարձակվող հարցագրույցներ
95	ը) Տպագիր հարցագրույցներ
96	թ) Մասնագիրական չափանիշների վարքականոն

UF & MDI °ñ áõË áèù

---

# 1. Ü³ È³ μ³ Ý

---

Առաջին փուլում քննարկվում է իրեն սոցիալական կամ հանրային քաղաքականության այս կամ այն ձևերը խթանելու միջոց: Այն օգտակար է հասարակական կապերի, գովազդի, հեղինակության և դասական լոգոտիպի բնագավառների փոխարինման մեթոդների ու հնարքների ամբողջությունից: Լրատվական քարտզության օգնությամբ ՆԿ-ները կարողանում են ձեռակերպում փոխ հանրության համար նշանակություն ունեցող հիմնահարցերին և գործունե կերպով ներքաշվել հասարակական երկխոսության մեջ:

Երկրորդ փուլում այսպես կոչված «նեթուորքինգ» է (բառացի՝ «ցանցային համակարգի սրբաբան», «ցանցով փոխարինում», իսկ վերջերս ձեռք է բերել նաև «մասնագիտական կապերի կամ ծանոթ-բարեկամների միջոցով որևէ հարց առաջ մղելու, այդ թվում՝ որևէ մեկին հարմար աշխատանքի փոխարինելու» իմաստը), այսինքն՝ ձեր իսկ կամ միանման նպատակներ որդեգրած որևէ այլ կազմակերպության անդամների հետ համարեղ աշխատանքը: «Նեթուորքինգ» շնորհիվ կարող եք ընդլայնել ձեր կազմակերպության անդամակցողների թիվը և ավելի մեծ թվով մարդկանց փոխկապակցել ձեր կարգից գործերի մասին: Այն խթանում է միավորումների սրբաբանում, միասնական աշխատանքի և ծրագրեր հղանալու առիթ տրամադրում: Նշանակալից ու ինֆորմատիվային ցանցերը շահույթ չհետապնդող կազմակերպություններին առաջարկում են ուղերձների ձեռակերպման հարցում միմյանց հետ համագործակցելու, փոխկապակցվելու և ծրագրեր փոխանակելու և քարտզությամբ գրադրվողներին ՋԼՄ-ների հետ կապելու հնարավորություններ:

Երրորդ փուլում քննարկվում է սեփական լրատվամիջոց, օրինակ՝ փոփոխական կամ հեռուստատեսային ծրագիր, *սրբաբանում ու փոխարինում է*: Այս մեթոդը կօգնի ձեզ շրջանցել ՋԼՄ-ները, եթե դրանք անհաղորդ են ձեր ուղերձների հանդեպ կամ փոխարինված չեն համագործակցության: Լրատվամիջոցի սրբաբանական արտադրության գործընթացը կարող է լրացնել ՋԼՄ-ներին հաղորդակցվելու բացը և հարուցել լրատվական լուսաբանման սահմանափակումները: Որպես ձեր սեփական լրատվամիջոցի վավերագրական ժապավենի, գովազդային հոլովակի, փոփոխական, հեռուստատեսային կամ ռադիո բանավեճի սրբաբանում դուք կարող եք պարզել ձեր իսկ պարզությունը և մեկնաբանել ձեզ հուզող հարցերը ձեր կողմից վերահսկվող ՋԼՄ-ներում:

Ուսումնական այս ձևերը կարող են օգտակար լինել լրատվական քարտզությանը, ինչպես նաև՝ լրատվամիջոցի արտադրությանն ու փոխարինմանը: Այսօր ներկայացված որոշ հարցեր կարող են պարզունակ լինել: Մակայն ձեր սովորածն իրականացնելիս՝ դուք կգտաք, որ հիմնարար այս աղյուսներն էական դեր ունեն լրատվական արդյունավետ ծրագիր կազմելու և պլանավորելու գործում:

## 2 *Áãã* »ë ëï ë»É

---





հովելով ձեր ձեռքի փակ նրանց հեռախոսի ու ֆաքսի համարների, հասցեների կամ հե-  
րաբերությունների ամկայությունը, այլև ձեր կապարած ու ծրագրած աշխատանքի  
նկատմամբ:

Ամեն անգամ, երբ նոր ծրագիր եք սկսում, գործին առնչվող բոլոր թղթերն ու նյու-  
թերը՝ հիշեցումներ, գեկուցագրեր, գրություններ, լրատվական պլանների նախագծեր,  
համապատասխան լրատվական հոդվածները, ընթերցվելիք նյութերը եւ այլն, փնդա-  
վորեք մեկ առանձին թղթապանակում:

Պարզորոշ պիտակավորեք թղթապանակը: Աշխատեք, որ քարտավորման ձեր  
համակարգը լինի պարզ, համառոտ եւ արդյունավետ: Ձեր թղթապանակները պետք է  
քարտավորված լինեն այբբենական կարգով: Թղթապանակների պիտակները պետք  
է լինեն ճշգրիտ: Այսպես, մանկական սպիտակադրոնության մասին հրապարակում-  
ների փաթեթը կամ նոր գեկույցը մի պիտակավորեք «մանկական սպիտակադրոնու-  
թյուն» վերնագրով: Նավանական է, որ դուք արդեն իսկ ունեք (կամ էլ կունենաք) հա-  
մանման թեմայով այլ գեկույցներ: Այդ թղթապանակի պիտակին գրեք հենց գեկույցի  
վերնագիրը, ասենք՝ «Սակավարչություն. պարմություն լուռ մարդասպանի մա-  
սին»: Նույն կանոնները վերաբերում են նաև էլեկտրոնային քարտարանային համա-  
կարգերին: Աշխատեք, որ նյութերը պահեստային փաթեթակներ ունենան՝ պահվելով  
հստակ փաթեթակվող ճկուն սկավառակների վրա:

## 2. ե) Գրաֆիկական պատկերում

**Տպագիր բլանկեր:** Ձեր ծրարի վրայի հեղադարձ հասցեն, ձեր լոգոտիպն ու մա-  
մուլի հաղորդագրության թերթիկի վրա ձեր կազմակերպության «անձնագրային փ-  
յալները» բոլորը միասին ձեր կազմակերպության ու նրան հուզող հարցերի մասին ան-  
խոս ազդանշաններ են ՁԼՄ-ների համար: Ձեր այս նյութերը պիտի նախապես մշակ-  
ված փետք ունենան՝ ջիներով չափից ավելի աչքի ընկնող կամ թանկարժեք:

Դիմեք գրաֆիկական ձեւավորողին, որպեսզի նա օգնի ձեզ՝ մշակելու գրավիչ ու  
պարզած բլանկեր: Եթե ձեր բյուջեն սահմանափակ է, ապա խնդրեք ձեւավորողին  
այդ աշխատանքը ձեզ համար ձրի անել կամ աջակցություն հայցեք փողկան քոլեջի  
արվեստի ֆակուլտետից: Ձեր ձեւավորողին հորդորեք պարտաստել 3-5 փաթեթակ,  
որոնցից էլ կընտրվի վերջնականը:

Տպագիր ձեր բլանկերը պետք է ներառեն ձեր լոգոտիպը, կազմակերպության  
պաշտոնական լրիվ անվանումը, հեռախոսի, ֆաքսի համարները, փոստային, էլեկտր-  
ոնային փոստի եւ, լինելու դեպքում՝ նաև վեբ էջի հասցեները: Եթե ձեր կազմակեր-  
պությունն ունի կարճ կարգախոս կամ նշանաբան, ապա կարող եք մտածել նաև  
փապագիր բլանկում այն գեպեղելու մասին:

**Մամուլի հաղորդագրության («պրես-թիվիզ»-ի) ձեւաթղթեր:** Մամուլի հա-  
ղորդագրությունների համար մշակեք հստակ ձեւաթղթիկներ, որոնց վրա պատկեր-  
ված կլինի փապագիր բլանկի վերնամասը: Դրանք պետք է լրագրողներին հստակ հուշ-  
են, որ իրենց սրագածը մամուլի հաղորդագրություն է: Թղթի գլխամասում պետք է  
հստակ նշում լինի, ասենք՝ «Մամուլի հաղորդագրություն», «Լուրեր ...-ից (անունը եւ  
խումբը)», «Լրատվական հաղորդագրություն» կամ պարզապես՝ «Լուրեր»:

**Անվանադաշտակներ, դրոշներ:** Մտածեք ձեր կազմակերպության անունն ու  
լոգոն պատկերող, հյուսիսը գույներով անվանադաշտակ ունենալու մասին: Այն կարե-  
լի է մամուլի ասուլիսների կամ հեռուստատեսային հանդիպումների ժամանակ ամրաց-  
նել ամբիոնին կամ որևէ բարձր, երեսացող փնդ: Թերևս կուզենաք պարվիրել նաև  
ձեր լոգոտիպով ու անունով դրոշ, որը մամուլի ասուլիսներին կարող եք կախել ձեր ներ-  
կայացուցիչ բանախոսի մեջքի երեսում՝ այնպես, որ ցանկացած նկարում այն երևա:

---

3. ¼ Ý. í ³ Í ³ ŪÝ  
ÉÏ ïí ³ ÙÇçáóÝ»ŕÇ  
Û³ ëÇÝ

Շարք հնարավոր է, որ առիթ ունենաք հեռախոսով գրուցելու անհամբեր որևէ լրագրողի հետ, հարկապես, եթե դուք նրան գանգել եք վերջնաժամկետին մոտ կամ ճիշտ այն պահին, երբ նա փորձում է ավարտին հասցնել առաջիկա թողարկում գնացող իր նյութը: Ուստի համարը հավաքելուց առաջ ինքներդ ձեզ հարց փվեք՝ արդյոք նյութը հանձնելու պահը չէ՞ փվյալ թղթակցի համար: Իսկ մոռանալու դեպքում՝ նույնը հարցրեք անձամբ թղթակցին՝ հենց որ նա վերցնի ընկալուչը:

Լրագրողի հետ հեռախոսային գրույց սկսելու լավագույն ձևեր հետևյալն է. «Բարեւ, ձեզ հետ խոսում է Այսինջ Այնինջյանը (փվեք ձեր անունը) X կազմակերպությունից: Մեկ-երկու բույս ժամանակ ունե՞ք գրուցելու, թե՞ նյութը հանձնելու պահն է հիմա»: Երբ ձեզ պարասխանեն, որ ունեն, ներկայացրեք ձեր «լավագույն առաջարկը»: Իսկ եթե սատն, որ գրադված են, կամ որ ժամանակը չի ներում, հարցրեք, թե է՞րբ կարող եք կրկին գանգահարել, որից հետո շրապ, բայց քաղաքավարի ցած դրեք լսափողը:

Ընդհանրապես լրագրողներին գանգահարելու լավագույն պահը կեսօրն է կամ ցերեկվա ժամը 1-ը: ուստիեք, եթե ընդհանրապես հնարավոր է, թղթակիցների հետ կապվել երեկոյան 5-ին կամ 6-ին, եթե միայն դա նրանց շրապ գանգի պարասխանը չէ կամ եթե դուք չեք գանգել՝ պարասխանելու այդ օրվա նյութին վերաբերող նրանց հարցմանը:

### 3. գ) Նուսալի աղբյուր եղևք

Լրարվամիջոցների հետ հարաբերություններում հաջողության չեք հասնի, եթե դրանք մարչելի չլինեն ձեզ համար: ԶԼՄ-ներին հասու լինելու, ինչպես նաև՝ ձեր հարցերի լուսարանման որակը վերահսկելու ամենահուսալի եղանակներից մեկը գովազդ գնելն է: Սակայն ՆԿ-ների մեծամասնությունն իր փրամադրության փակ վճարովի գովազդի համար պահանջվող հսկայական գումարներ չունի: Նասարակության ուշադրությունն իրենց հարցերի վրա բեռնելու համար՝ նրանք իրենց հույսը պեպք է դնեն այսպես կոչված «ձրի լրարվամիջոցների» վրա: Ծիշը է, այս դեպքում թուլանում է լրարվության հարցերով պարասխանափրունների վերահսկողությունը կազմակերպության խնդիրների ձևակերպման ու ներկայացման վրա, սակայն երբ լրարվական ԶԼՄ-ներն են լուսարանում այդ խնդիրները, ապա ավելանում է վարահությունը կազմակերպության հանդեպ, որը նախընտրել է օբյեկտիվ լրագրության միջոցով փեղ հասցնել իր ասելիքը:

Երրորդ անձանց միջոցով խնդիրները ներկայացնելու կերպը անհամեմատ ավելի վարահարժան ու արդյունավետ է, քան վճարովի գովազդը, որը ԶԼՄ-ների լսարանի կողմից քարոզչություն է դիքվում: Չեք կարող հավասարության նշան դնել ժաղիոյով, հեռուստարեսությամբ եւ լրագրերում հայտնվող վճարովի գովազդի ու օբյեկտիվ լրագրության միջև: Նասարակությունը լավ գիքի դրանց փարբերությունը:

Ուրեմն ինչպե՞ս պարասպել լուրը: Եթե այսօր ներս ընկնեք խմբագրություն՝ ձեր ձեռքին թափահարելով հարբեցողության վնասակարության մասին հնացած մի գեկույց ու պահանջեք լուսարանել ալկոհոլի չարաշահման վրանգները, ապա ձեզ վրա կծիծաղեն եւ դուրս կիրավիրեն սենյակից: Որքան էլ որ ալկոհոլի չարաշահումը վրանգավոր է, նման երկարաշունչ ուղերձն ու ժամանակավրեպ գեկույցը լրարվական փեսակերից այլևս արժեք չունեն:

Մուքըր ԶԼՄ-ներ սահմանափակ է եւ վերապահված է այն սյուժեներին, որոնք խմբագրի փեսակերից կարևոր են, ուշագրավ ու թարմ: Այդ պարճառով լրարվության հարցերով պարասխանափրուն պեպք է շարունակ փնարի իր սյուժեն հետարբրքի ու թարմ ներկայացնելու նորանոր ուղիներ:

### 3. դ) «Ծանր» լուրն ընդդեմ «թեթև» լուրի

Լրաբովությունը կարելի է բաժանել երկու տեսակի՝ «ծանր» եւ «թեթև»:

«Ծանր» լրաբովությունը հենց բոլորիս պարկերացմամբ ավանդական լուրն է: Սա ներառում է փաստական հաղորդագրությունները, վիճահարույց բացահայտումները կամ լրագրողական հեղափոխության արդյունքները:

*Վերջերս Կալիֆորնիայում ծիսելու դեմ պայքարող խմբերից մեկը կազմակերպեց այսօրինակ լրաբովական նյութերի շարք՝ երիտասարդներին ծխախոտի անօրինական վաճառքի մասին: Նրանք այսպիսի փորձ անցկացրեցին. մի քանի դեռահասներ շրջեցին խանութից խանութ՝ գնելով ծխախոտ, հակառակ այն բանի, որ ԱՄՆ-ում 18-ից ցածր տարիքի երեխաներին դրա վաճառքն արգելված է:*

Ահա եւ «ծանր» լրաբովության այլ օրինակներ.

Խորհրդարանը պարբերաբար է ընդունել տեղական ջրավազաններն աղտոտող մի քիմիկատի օգտագործումն արգելող նոր օրենք:

*Ձեր կազմակերպությունը հրապարակում է առողջության վրա այդ քիմիկատի վնասակար ազդեցության մասին իր նոր գեկույցը:*

«Թեթև» լրաբովությունը, այսինքն՝ առօրյա, կյանքային պարմությունները, ակնարկները, մարդկային տեսակերից գրավչություն ներկայացնող հրապարակումները, գուցե «ծանր» լուրերից ավելի թույլ անմիջական ազդեցություն ունենան հասարակական բանավեճերի վրա, բայց եւ այնպես կանդրադառնան քարոզվող հարցերի շուրջ հասարակական կարծիքի ձևավորման վրա: «Թեթև» լրաբովական նյութը ձեր ասելիքը տեղ հասցնելու առավել նրբին, բայց հաճախ՝ ոչ պակաս արդյունավետ ճանապարհն է:

Այսպես, տեղական մանկապանն աշխատող սոցիալական ծառայողի դիմանկարը ներկայացնող հրապարակումը կարող է անուղղակիորեն ուշադրություն հրավիրել նման ծրագրերի համար կառավարության ֆինանսավորման անբավարարության վրա:

Ակնարկը շրապօգնության բժիշկների մասին, ովքեր սկսել են ավելի ու ավելի հաճախ օգնություն փրամադրել հարբած վիճակում մեթենա վարելուց տուժածներին, հնարավորություն է տալիս բարձրաձայնել նման երևույթի վրանգավորության հարցը:

---

4. Ø³ ÚáóÇÑ»i  
Ñ³ Óañ³ İ óí »Éáõ  
ÙÇçáóÝ»ñÁ



★ Պատրաստար եղևք ձեր րեսակերը հնարավորինս հստակ ու համոզիչ կերպով ներկայացնելու:

★ Կարողացեք ընդունել ձեր ընդդիմախոսի ուժեղ կողմերը: Եթև չկարողանաք քարացած կարգախոսներից րացի որևէ այլ րան առաջարկել լրագրողին, ապա չեք արժանանա նրա վստահությանը, եւ նա ձեզ հերագա սյուժեների հուսալի աղբյուր չի համարի:

#### **4. ր) Մամուլի հաղորդագրություններ. կազմումը եւ րարածումը**

Որակյալ հաղորդագրություն կազմելու համար պահանջվում է ծախսել ժամանակ ու միւրք, կարարել նախապարասրական աշխատանք: Բացառությամք այն դեպքերի, երբ անհրաժեշտ է շրասյ արձագանքել հրատասյ լուրին, առնվազն մեկ օր ժամանակ րվեք ինքներդ ձեզ՝ մրքերը կազմակերպելու եւ հարցն ուսումնասիրելու, ինչպես նաև՝ հաղորդագրության սեուագիրը գրել-մշակելու եւ գործընկերներին ցույց րալու համար, որպեսզի դրանից հերո կրկին արրագրեք ու մեկ անգամ ես աչքի անցկացնեք այն:

Նիշեք, որ մամուլի հաղորդագրությունը որևէ հասրարության ու լրագրողների միջև հաղորդակցության ընդունված եղանակ է: Այն րհատերն ու րեսակերը րոխասնցելու մի հնարավորություն է նաև: Փասրերի ու վիճակագրական րվյալների պարզ հիշարակումը դեռևս լրագրողական եյութ չէ: Գրագեր կազմված հաղորդագրությունը օգրվում է րհատերից, վիճակագրությունից ու մեջրերումներից՝ հենք դառնալով սյուժեի համար, որպեսզի վերջինս ներկայացնի ու հիմնավորի րվյալ րեսակերը:

Եվ ամենակարևորը. լրատրության աղբյուր դառնալու համար՝ մամուլի հաղորդագրությունը պերք է պարունակի լրագրողի, նրա խմբագրի եւ լսարանի համար թարմ րեղեկատրություն, ըստ որում այն չպերք է դառնա գուր ձեր «դատրը» պաշրպանելու առանձնահատուկ առիթ:

**Ի՞նչ պերք է ներառի մամուլի հաղորդագրությունը:** Ձեր հաղորդագրությունը պերք է պատասխանի հերերյալ հարցերին. ո՞վ, ի՞նչը, որրե՞դ, ինչո՞ւ եւ ե՞րբ: Լրագրողներն ու լրատրության հարցերով պատասխանատուները հեշտ հիշելու համար հաճախ դրանք կարճ կոչում են «հինգ դարյուներ» (անգլերենով այդ բուր հարցերը սկսվում են միևնույն «W»- «դարյու» րատուվ-թարգ.):

★ Ո՞վ. ձեր սյուժեի խնդրո առարկան՝ ձեր կազմակերպությունը, որևէ միավորում, անձ, իրադարձություն կամ գործունեություն, որը պերք է րարբերակվի ու նկարագրվի:

★ Ի՞նչը. այն «լուրը», որի մասին ԶԼՄ-ները պիրի րեղեկացվեն:

★ Որրե՞դ. եթև խոսքը մամուլի ասուլիսի կամ որևէ միջոցառման մասին է, ապա որրրե՞դ է այն կայանալու: Ուշադիր եղեք րեղը նշելիս. միգուցև արժև ընդգրկել նաև ճանապարհը ցուցող քարրեզ:

★ Ե՞րբ. կայանալու ժամը: Ամսաթիվը, շարաթվա օրն ու կոնկրեր ժամը պերք է հստակ նշված լինեն:



Ձեր կազմակերպության ներկայացուցիչ կամ այդ թեմայով զբաղվող պաշտոնյաների, ինչպես նաև՝ դրսի ճանաչված փորձագետների խոսքից պարտասուրբ մեջբերումներ, որոնք խմաստ ու կշիռ կհաղորդեն ձեր փաստերին ու վրվյալներին: Վերադառնալով խմբի ջրի աղտոտմանը նվիրված գեկույցին. պարկերացրեք, թե ձեր ամենահիմնական վրվյալն այն է, որ խմելու ջրից վերցված նմուշների 75%-ը վարակված է դիզենտերիա հարուցող վրանգավոր մանրէներով:

Այս վրվյալը, որը յուրաքանչյուր պրոֆեսիոնալ լրագրող անպայման կընդգրկեր իր նյութում, ներկայացրեք որևէ բժշկի խոսքից արված մեջբերմանը զուգահեռ՝ պարզաբանելու համար մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունը: Ասենք՝ այսպես. «Աներևակայելի է, որ մեր օրերում, մեր դարում ընտանիքները ստիպված են դիմագրավել միջնադարյան դիզենտերիայի՝ երբեմն ճակատագրական սպառնալիքին», ասում է (ձեր րեղական հիվանդանոցի անունը) հիվանդանոցի մանկաբուժության բաժնի վարիչ, բժիշկ X-ը: «Ներկայիս գիտաբանական միջոցներով կարելի է իսպառ վերացնել այդ հիվանդությունը: Ուրեմն ինչի՞ն է սպասում քաղաքային խորհուրդը»:

Բժշկական ասպարեզի հարգված փորձագետից արված այս մեջբերումը մասնագիտական րեսակետից հավելյալ վստահություն է հաղորդում ձեր վրվյալներին ու առաջարկված լուծումներին՝ միաժամանակ իրականացնելով ձեր հիմնական նպատակը. չոր վիճակագրությունը իմաստալից դարձնել շարքային քաղաքացու համար:

Ուշադիր եղեք, որպեսզի մամուլի հաղորդագրությունը չշեղվի ձեր ընտրված լրավական ուղուց: Եթե, ասենք, ձեր ուշադրության կենտրոնում առողջության համար խմելու ջրի վարակվածության հնարավոր վրանգներն են, կարիք չկա ներկայացնել շրջակա միջավայրի վրա աղտոտվածության հետևանքների մասին մրահագրությունները:

*Ձևաչափը (Ֆորմատը).* մամուլի հաղորդագրությունը պետք է պարունակի հետևյալ տարրերը.

★ Նաղորդագրության ամսաթիվը: Սա այն օրն է, երբ ձեր կազմակերպությունը հաղորդագրության մեջ պարունակվող րեղեկարվության մասին իրագեկում է լայն հասարակայնությանը: Եթե մամուլի հաղորդագրությունը տարածելու եք թողարկման իրական օրվանից առաջ, հետևեք, որպեսզի հաղորդագրության ամսաթիվը րեղում նշված լինի՝ «Տարածումն արգելված է մինչև այսինչ ամիսը, օրը, տարին» (օրինակ՝ «Տարածումն արգելված է մինչև 2003թ. հոկտեմբերի 17-ը»):

★ Պատասխանատու աշխատակցի անունը և ուղիղ հեռախոսակապի համարը: Սա այն մարդն է, ում կարող են դիմել լրագրողները, եթե հետաքրքրված լինեն հաղորդագրությանն առնչվող հավելյալ րեղեկություններով: Սովորաբար որպես պատասխանատու անձ նշվում է մամուլի քարտուղարի անունը:

★ Խորագիրը: Տե՛ս վերը:

★ Կազմակերպության մարնանշումը: Սա կարարվում է երկու ձևով: Առաջինն այն է, երբ մամուլի հաղորդագրությունը տրագրվում է վրվյալ կազմակերպության մամուլի հաղորդագրության հատուկ տրագրի բլանկերի վրա: Երկրորդ է այն է, երբ հաղորդագրության ներքևում կցվում է կազմակերպությունն ու նրա առաքելությունը նկարագրող սրանդարտ պարբերություն: Ասենք՝ «խմելու ջրի հարցերով խորհուրդը շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որի նյութական միջոցները գոյանում են անդամավճարներից և անձնական նվիրատվություններից: ԽՋՆԻ -ն աշխատում է Մովակիայի Նանրապետության ողջ տարածքում խմելու ջրի առատ, մաքուր և անվնաս պաշարներ ապահովելու ու պահպանելու ուղղությամբ»:

#### 4. գ) Մամուլի ասուլիսներ

Մամուլի ասուլիսները պետք է կազմակերպվեն միմիայն հետևյալ երկու պար-  
ճառով. 1) փրկարկարությունը, որն ուզում եք հաղորդել, այնքան խրթին է, որ պար-  
զաբանելու համար երկխոսության կարիք կա, եւ 2) դուք միփոմնավոր կամնում եք  
հավելյալ լրջություն հաղորդել լրարվական ձեր հայրարարությունը (Նավելվամ Դ):

Մամուլի ասուլիսի կազմակերպման համար պահանջվող ողջ ժամանակի ու էներ-  
գիայի հաշվին կարող եք փասնյակ հեռախոսազանգեր ունենալ, անցկացնել մի շարք  
ղեմառղեմ հանղիպումներ ու ճեպագրույցներ: Շար հաճախ որեւէ կազմակերպություն  
մեձ եռաղղղ մամուլի ասուլիս է կազմակերպում, որպեսզի հեղո պարզի, որ իր կողմի  
ներկայացուցիչներն իրենց թվով գերազանցում են լրագրողներին:

Մամուլի ասուլիս անցկացնելը փրղին է այն դեպքերում, երբ իսկապես որեւէ լուր  
ունեք հաղորդելու, ասենք՝ ձեր նոր գեկույցի մասին, կամ երբ պետք է արագ արձազան-  
քել հրարապ որեւէ լուրի, իսկ դուք չեք կարող հասու լինել միաժամանակ բոլոր լրար-  
վամիջոցներին: Ասուլիս հրավիրեք այն դեպքերում, եթե թողարկել եք ձեր հիմնական  
գեկույցը, եթե քաղաք է ժամանել համերկրային լուրերը լուսարանող որեւէ լրագրող  
կամ հայրնի դեմք, որն առնչվում է ձեր հարցերին, կամ եթե հիրավի կարեւոր հայրա-  
րարություն ունեք անելու:

Մշրապես ինքներղ ձեզ հարցերե՝ արղղր չե՛մ վարնում թղթակցի ժամանակը: Կա-  
րո՞ղ էի նույն արղղունքին հասնել մամուլի հաղորղագրություն կազմելով: Եթե իրակա-  
նում կա նման հնարավորություն, ապա հեղ կանգնեք մամուլի ասուլիսի գաղափարից:

**Մամուլի ասուլիսի նախապարասպումը.** կախվամ ձեր միջոցառման բար-  
ղությունից ու դրա նախապարասպման համար անհրամեշր ժամաբանակից, կա-  
րող են լինել մամուլին գրավոր ժանուցելու փարբեր եղանակներ: Սպասվող միջոցառ-  
ման «ո՞վ-ի՞նչ-որրե՞ղ-ե՞րբ»-ը պարզաբանող՝ ՁԼՄ-ների համար նախարեակամ  
հուշաթերթիկը պետք է արարողությունից 5-7 աշխարանքային օր առաջ սովորական  
կամ էլեկրոնային փոսքով, ֆաքսով ողարկվի ձեր հիմնական մամուլի ցանկերում  
ընգրկվամներին: Մամուլի ասուլիսին ներկայացվելիք «լրարվության» մասին ամբող-  
ջական մամուլի հաղորղագրությունը պետք է կազմվի նախապես եւ թողարկվի հենց  
ասուլիսի օրը:

*ՁԼՄ-ների հեղ կապվելու եղանակները.* մամուլի ասուլիսից երկու-երեք օր  
առաջ պետք է պլանավորեք՝ գանգահարել լրարու այն ՁԼՄ-ներին, որոնք ձեր միջո-  
ցառման հավանական լուսարանողները կարող են լինել՝ բացարբելով, որ դուք ընղա-  
մենը հիշեցնում եք ավելի վաղ ողարկվամ գրավոր նղութերի մասին: Կարող եք առա-  
ջարկել՝ ֆաքսով կամ էլեկրոնային փոսքով իրենց ողարկել ՁԼՄ-ների համար  
կազմվամ նախնական հուշաթերթիկը: Ընղ որում, սա կարող եք անել կամ իբրեւ ձեր  
գանգի հավելյալ «ապահովագրում», կամ՝ վերջնական հիշեցում, եթե դժվարանում եք  
կապվել փյալ լրարվամիջոցի կամ թղթակցի հեղ:

Մամուլի համերկրային, ազգային գորձակաղությունները ՁԼՄ-ներին ասուլիսի  
մասին փրղեկացնելու լրացուցիչ աղբղուր են: Լրարվական ժառայությունների մեձ  
մասը փարաձում է փյալ օրվա միջոցառումների ցանկը, որը գորձակաղություններն  
ողարկում են իրենց հաճախորղներին: Գրի առեք լրարվական փյալ ժառայության՝  
հայրարարությունների ներկայացման ժամանակացույցի վերջնամակերները: Մո-  
վորական կամ էլեկրոնային փոսքով, հեռախոսով կամ ֆաքսով ողարկեք ձեր ին-  
ֆորմացիան փրղական համապարասխան ժառայությանը՝ միջոցառումից առնվազն  
48 ժամ առաջ:

Բացման խոսքը պետք է լինի պարզ և սեղմ. բոլոր ելույթները միասին պիտի տևեն 15 րոպեից ոչ ավել: Ասուլիսը վարողը պետք է ներկայացնի բանախոսներին և պատրաստ պահի վարելու նաև հարցուպատասխանի հարվածը: Նույն մարդը կարող է հնչեցնել նաև բացման խոսքը:

Նպատակ ուշադրություն դարձրեք այն բանին, թե ինչ հերթականությամբ են ելույթ ունենալու ձեր բանախոսները: Վերջիններիս խոսքի ամբողջական գրավոր փաթեթները պատրաստ պահեք մամուլին փախուցում համար, իսկ իրենց էլ խնդրեք խոսելիս ոչ թե բառ առ բառ ընթերցել դրանք, այլ համառոտ ներկայացնել կարևորագույն կետերը:

*Մամուլի համար նախատեսված նյութերի փաթեթներ.* սրանք անգնահատելի նշանակություն ունեն մամուլի ասուլիսների նյութն ու ասելիքը կազմակերպելու և փորձաքննելու արժանավոր: Այս փաթեթները կարող են օգտագործել ինչպես ասուլիսին ներկա, այնպես էլ բացակա լրագրողները: Փաթեթը պետք է ընդգրկի.

- ★ մամուլի ասուլիսի բանախոսների ելույթները՝ փակված ձևով բովանդակների վրա, նրանց փոխարինումը հանդերձ,
- ★ մամուլի հաղորդագրությունը,
- ★ խնդրո առարկա հայեցողական հարցերի նկարագրությունը,
- ★ նույն հարցերով զբաղվող մամուլի հավելյալ աղբյուրների փոխարինումը,
- ★ փորձագետների և այլ կազմակերպությունների դրական եզրակացությունները,
- ★ ընդհանուր արդյունքները մամուլի ասուլիսը հովանավորող կազմակերպության մասին:

Ցանկության դեպքում կարող եք ներառել նաև այլ նյութեր, օրինակ՝ հիմնական աղբյուրները, թարմ տեղեկատվություն օրենսդրական նախաձեռնությունների մասին, դրական կարծիք արտահայտող հրապարակումներ, խմբագրականներ և այլն (Նավելվալ Ե):

*Հաջորդող քայլեր.* ունեցեք մասնակիցների գրանցման թերթիկներ (ստորագրանշումով)՝ մամուլի ձեր ասուլիսներին հաճախած լրագրողների համար: Ասուլիսից անմիջապես հետո ստուգեք այդ ցուցակները՝ պարզելու, թե առաջնորդող թղթակիցներից, ՋԼՄ-ներից ո՞րը ներկա չի եղել: Նախապատրաստված դեպքում ձեռքով հանձնեք նրանց մամուլի համար նախատեսված նյութերի փաթեթները և, որպես հաջորդ քայլ, մտադրարարական մեկ ժամ անց գանգահարեք այդ թղթակիցներին կամ համապատասխան ՋԼՄ-ների խմբագիրներին: Նախապես այսպիսի քայլերն ընդարձակում են միջոցառման լուսարանման ծավալը կամ հավելյալ հրապարակումների առիթ դառնում:

*Գնահատումը.* կարևոր է եղածն ամփոփել ու պարզել, թե ի՞նչն էր լավ և ի՞նչն էր վատ փոխյալ մամուլի ասուլիսում: Գնահատման նպատակով առանձին հավաք ծրագրեք ձեր պատասխանատու աշխատակիցների մասնակցությամբ՝ քննարկելու միջոցառման կազմակերպվածության աստիճանը, այն, թե ասուլիսի մասնակիցներն ինչպես արձագանքեցին ՋԼՄ-ների հարցերին, միջոցառման լուսարանում կամ դրա անդամները և այլն: Գնահատման նպատակով այսպիսի հավաքները հնարավորություն են տալիս մտածել, թե ի՞նչ կարելի է անել՝ մամուլի հաջորդ ասուլիսին ՋԼՄ-ների հետ հարաբերություններն ավելի արդյունավետ դարձնելու համար:

#### 4. դ) Մամուլի ճեպագրույցներ (րրիֆինգներ)

Ճեպագրույցները լրագրողներին ապագա հրապարակումների գաղափարներ հաղորդելու առավել արդյունավետ եղանակը կարող են լինել: Որպես ձեր պլանի մաս՝

են «մեղիա միջոցառումներ»։ Նպատակը՝ ՁԼՄ-ներում լուսարանումը խթանելն է, որպեսզի փարավաթի լրացման քարոզչության ձևեր հիմնական ուղերձը։ Իդեալական փարերակով նման միջոցառումը պետք է լինի կարճ, պարզ, վերջնաժամկետին ոչ շատ մոտ ժամի ծրագրված և փետրվարի ամսին ներկայանալի։ Անշուշտ պետք է գտնվի լինել, որպեսզի այնպիսի փարավորություն չստեղծվի, թե դուք ձգտում եք սոսկ ուշադրության ու հրապարակայնության արժանանալ։ Որքան շատ ցույց փար, թե ձգտում եք հրապարակայնություն ձեռք բերել գույր ճանաչելի դառնալու համար, այնքան ավելի դժկամորեն լրացողները ձեզ կարժանացնեն դրան, և այնքան պակաս արժանահավասար կլինի ձեր ասելիքը։

Դրա փոխարեն՝ պետք է ձեր մեղիա միջոցառումները դարձնեք ավելի կառուցողական ու առաջադիմական, որպեսզի ձեր նպատակներն իրենց արտացոլումը գտնեն ՁԼՄ-ներում, ու երևան դրանց հասնելու ձեր ուղիները։ Այդուհանդերձ, երբեմն ստեղծագործական հատուկ ձիրք է պետք, որպեսզի գայթակղես լրացողներին՝ լուսարանել այն, ինչը շարերի համար հնացած, անհետաքրքիր նյութ է թվում։ Ահա մի քանի խորհուրդ, որոնք կօգնեն ապահովել լրացման ձեր միջոցառումների հաջողությունը։

- ★ Աշխարհը, որպեսզի ՁԼՄ-ներից ձեր հրավիրյալների շարքում լինեն նրանք, ովքեր ավելի մեծ հավանականությամբ լուրերում կանդիդատան ձեր միջոցառմանը։ Նախապայմանական դեպքում հեռախոսով հեղափոխվել իրերի հետագա ընթացքի մասին։
- ★ Ներկայում, որպեսզի բավականաչափ ժամանակ առաջ ծանուցեք միջոցառման մասին։
- ★ Աշխարհը այնպիսի միջոցառում կազմակերպել, որը փետրվարի ամսին հաջողված նյութ դառնա հեռուստատեսային պատկերների կամ փայլազարդ ՁԼՄ-ներում հայտնվելիք լուսանկարների համար։
- ★ Եթե կարողանաք դրամափկական որևէ փարը ներառել ձեր միջոցառման մեջ, ապա դրանով կավելացնեք վերջինիս լուսարանման հավանականությունը։
- ★ Որքան հեշտ լինի ձեր միջոցառումը լուսարանելը, այնքան լավ։
- ★ Առանձնացրեք մեկին, ով պարտասար և ունակ կլինի հարցազրույցներ փար լրագրողներին, շփվել նրանց հետ ու առաջարկել խնդրի բնարկման հատուկ փետրվարներ, որոնք կարող են նպաստել ձեր ասելիքի փարածմանը։
- ★ Փորձեք մտովի պատկերացնել, թե ինչպես կընկալի մամուլը ձեր միջոցառումը։ Նորից լրագրային խորագրեր ու վերնագրեր, որոնք, ըստ ձեզ, առավել ճշգրիտ կնկարագրեն իրավիճակը։ Միջոցառմանը փորձեք նայել լրագրողի աչքերով։ Եթե գտնեք, որ միջոցառումը սպասված արդյունքը չի ունենա, ապա հիմնովին վերափոխեք այն։

#### 4. Գ) Ռադիո թոկ-շոուներ

Ռադիոյով անցկացվող թոկ-շոուները լրացման ամենաճկուն միջոցներից մեկն են ՆԿ-ների համար։ Դրանք համեմատաբար մարջելի են և բավական շատ ժամանակ են ընձեռում ներկայացնելու ձեր փետրվարներն ու մի մեծ լսարանի հաղորդակից դարձնելու դրանց։

Ձեր սյուժեն կամ բանախոսին ռադիո շոունի առաջարկելու համար.

- ★ Պարտասարեք գրավոր նյութեր (մամուլի համար նախապեսված նյութերի փաթեթի նման), որոնք ներկայացնում են փայլա սյուժեի կամ խնդրի որոշակի «հայեցակետը»։ Աշխարհը, որպեսզի փայլազարդ նյութը հնարավորինս սեղմ լինի, և սկզբում էլ փրված լինի դրա խարացված ամփոփումը։
- ★ Առաջարկեք սյուժեներ, որոնք հրապարակ են, միաժամանակ կարևոր ու պարզա-





ված-գրված հայտարարությունը ռադիո եթերում ընթերցվելու մեծ հավանականություն ունի: Տամայնքային կյանքին վերաբերող մյուս հայտարարությունների հետ նույն բովանակմանը հղվելով՝ սրանք սովորաբար մի քանի շաբաթ շարունակ, օրական մեկ անգամ փոխանիփոխ եթեր են արձակվում:

*Թուկ-շոուներ կամ հասարակական հարցեր քննարկող շոուներ.* որոշ ռադիո կայաններ ունեն այսպիսի սեփական շոուներ, որտեղ կարող է հնչել ձեր թեման: Նման շոուների պրոդյուսերները հաճախ լավ նյութերի քաղց են գտնում: Այս մեկը ես չափազանց արդյունավետ եղանակ է՝ համոզվելու, որ ձեր ասելիքը հասել է նպատակային լսարանին:

Նեոստրալայանները նույնպես ունեն թուկ-շոուներ կամ հանրային հարցերին նվիրված ծրագրեր, հաղորդումներ: Այսօրինակ շոուների պրոդյուսերները հաճախ հետաքրքրված են՝ իրենց ծրագրերում ընդգրկել հոդվածների հեղինակներին, բայց դրա համար սովորաբար անհրաժեշտ է, որպեսզի փոխադրված հոդվածագիրը կամ հովանավորող հասարակական կազմակերպությունը նախապես կապվեն իրենց հետ:

#### **4. Ժ) Նարգագրույցներ. ի՞նչ է ձեզ անհրաժեշտ գիտնալ**

Անկախ լրատվության միջոցից (ռադիո, հեռուստատեսություն կամ փոստային մամուլ) եւ հարցազրույց վարողից՝ գլխավոր սկզբունքն այն է, որ դուք պետք է միշտ վերահսկեք հարցազրույցի ժամանակ փոքր իրավիճակը:

Ի մի բերեք այն ողջ տեղեկատվությունը, որը մշակել եք՝ լրատվական ձեր ռազմավարությունը ծրագրելիս (տե՛ս գլուխ 5-ի սկիզբը եւ հաջորդիվ), եւ վերանայեք առանցքային մանրամասները՝ նախքան հարցազրույցի իրավիճակում ինքներդ ձեզ դնելը: Որոշեք, թե ինչի՞ եք ձգտում հասնել հարցազրույցի միջոցով: Ընտրեք, թե ո՞վ է ձեր լսարանը: Նստակցեք, թե ի՞նչ տեսակի հարցազրույց է անցկացնում ՋԼՄ-ներից յուրաքանչյուրը: Տե՛ղեք, որ թեպետ ռադիո հարցազրույցին հեռուստատեսայինից փոքրեր ձեռով եք նախապատրաստվելու, սակայն բանալին միայն մեկն է՝ ընդամենը պատրաստվել:

Բոլորն էլ նյարդայնանում են՝ հարցազրույցի պատրաստվելիս: Կան բազմաթիվ մեթոդներ, որոնք կօգնեն ձեզ ավելի անկաշկանդ կամ պակաս հուզված զգալ, բայց մի սպասեք, որ ձեր հուզմունքը կարող է լրիվ վերանալ: Նյարդային լարումը հաղթահարելու լավագույն եղանակը լրջորեն նախապատրաստվելն է: Բացի այդ՝ վարժանքի միջոցով փորձեք ձեր նպատակներն ավելի գունեղ ներկայացնել, օգտագործել հետաքրքիր գույնաբանություններ, լեզվական վառ արտահայտչամիջոցներ, ոչ շարժուն օրինակներ եւ պարզաբանումներ, ինչպես նաև՝ ոչ խորթին փոխանակել: Պետք է քննարկեք փոքրեր ձեռով, թե ինչպե՛ս կարող եք ընդգծել ձեր ուզած ամենակարևոր կետերը, բացառել ձեր նպատակին հասնելու վերաբերյալ ցանկացած թյուրըմբռնում եւ պարզաբանել փոխադրված խնդրի կամ կազմակերպության ապագայի մասին ձեր պատկերացումները:

#### **Տիպական կանոններ**

★ Պետք է վստահ կեցվածք ունենալ ՋԼՄ-ների հետ հարաբերվելիս: Մի՛ եղեք վեհերար կամ անվճռական:

պև կամ ավելի երկար ժամանակ: Մահմանափակվեք այն երեք ամենակարևոր կերևրի շրջանակում, որոնք կցանկանայիք հնչեցնել: Սրանք ձեզ համար կլինեն «ապահով կղզյակներ», որտեղ դուք ժամանակ առ ժամանակ կարող եք վերադառնալ հարցազրույցի ընթացքում: Անկախ ձեզ փրամադրվող ժամանակից, աշխատեք որևէ հարցազրույցի ղեկավարում երեքից ավելի հիմնական հարցադրման չանդրադառնալ:

★ Նարցազրույցը նորից ու նորից խաղարկեք ձեր գործընկերների հետ: Եթև կարող եք՝ խնդրեք նրանց խաղալ հաղորդավարի ու ընդդիմախոսի դերերը: Մակայն անգիր մի՛ արեք ո՛չ պարասխանները, ո՛չ էլ բուն հարցադրումները, դրանք նախապես սերտած եւ անընական կհնչեն: Մտքում ունեցեք այն երեք հիմնական կերերը, որոնց կուզենայիք անդրադառնալ: Ննարավորինս քիչ դիմեք թվերի օգնությանը: Մարդիկ շար արագ հոգնում են վիճակագրական տվյալներից: Ի տարբերություն ռադիոյի՝ հեռուստատեսությանը մարդը պետք է ավելի տպավորիչ, խանդավառ երես, ուստի ձեզ համար թերես շար օգտակար կլինի, եթև մի քանի անգամ տեսագրեք ու դիտեք ձեր խաղարկային փորձերը: Միգուցև գտնեք, որ արժև շրջանցել ձեզ հարմար այս կամ այն կերը՝ հանուն այն բանի, որ ավելի հուզական տպավորություն թողնեք հեռուստատեսային ձեր հարցազրույցի ժամանակ:

★ Կատարեք ձեր տնային առաջադրանքը: Փորձեք գուշակել քննարկվելիք հարցերը եւ խորապես ամբարցրեք ձեր հիմքերը՝ զինվելով ձեր ուժեղագույն փաստարկներով:

★ Նարցրեք ինքներդ ձեզ, թև ո՛վ է ինձ դիտելու կամ լսելու: Ի՛նչ կուզենայիք, որ լսարանը սրանար այդ հաղորդումից: Ի՛նչպես կցանկանայիք փոխել լսարանի վերաբերմունքը: Ի՛նչ կուզենայիք, որ այն անըն՝ իբրև իր տեսածի կամ լսածի արդյունք: Նիշեք, որ վարքի փոփոխումը լրատվական քարոզչամիջոցների հիմնական նպատակներից մեկն է:

#### *Նադորդման ընթացքում.*

★ Նեարձակվող ելույթները պաշտոնական բանավեճեր չեն, որոնք գնահատվում են ըստ վիճարկվող հարցերում հաղթել-պարտվելու հաշվի: Դրա փոխարեն դուք պետք է հետապնդեք միաժամանակ երկու նպատակ.

★ ա) Նամոզիչ եղեք տվյալ հարցին վերաբերող ձեր խոսքում:

★ բ) Այնպես արեք, որ ձեր լսարանը զգա, թև դուք հենց այն մարդն եք, ում իրենք սիրում ու հավատում են:

★ Մի՛ եղեք կրավորական կամ չափից դուրս բարեկիրթ: Ընդհատեք ձեր ընդիմախոսին, եթև նա դրության տրե է դառնում բանավեճի ժամանակ, բայց աշխատեք դա այնպես անել, որ հնչի որպես սովորական խոսակցական անհամաձայնություն, այլ ոչ թև՝ կովարարություն, կշտամբանք կամ քարոզ:

★ Նագնվեք գուսպ, հարմարավեր ու կոկիկ:

★ Առանձին թերթիկի վրա գրի առեք ձեր ասելիքի հիմնական կերերը: Այն ձեռքի տակ պահեք, որպեսզի կարողանաք ընդմիջանը աչքի անցկացնել:

★ Խոսեք պարզ, հստակ եւ ուղիղ: Մի՛ գործածեք մասնագիտական ժարգոն կամ ծառայողական հասկումներ, պայմանական արտահայտություններ:

★ Եթև հարցը լավ չեք լսել, խնդրեք հարցազրույց վարողին՝ կրկնել այն:

★ Խոսեք կենդանի լեզվով, բերեք պատկերավոր, գունեղ օրինակներ, եղեք եռանդուն, բայց ամենակարևորը՝ եղեք ինքներդ ձեզ նման:

Միշտ ասեք ճշմարտությունը եւ նախապես համոզվեք, որ այն, ինչ որպես սպացուցված փաստ եք հայտարարում, իսկապես այդպիսին է: Ավելի լավ է ոչինչ չասել, քան չափազանցնել ու բռնվել խոսքի վրա:

★ Եղեք ակտիվ, խանդավառ: Թև՝ հեռուստատեսությունը եւ թև՝ ռադիոն հակված են «տրափակեցնել-համահարթեցնել» մարդկանց՝ նրանց դարձնելով նվազ հուզական ու ավելի «քաղաքակիրթ». այնպես որ՝ տարվեք, ոգևորվեք ձեր ասելիքով:



Քանի որ ռադիո հարցազրույցներում փետողական պարկերներ չկան, ձեր բառա-  
յին արքայապետությունները, խոսքի պարզությունը, հուզականությունը եւ ասելիքի բո-  
վանդակությունը շարք ավելի կարեւոր են, քան հեռուստատեսության դեպքում:

*Ուղղակիորեն հեռախոսով հարցազրույց փայլու խնդրանքները.* Շարք  
դեպքերում լրագրողները, հարկապես՝ նյութը վերջնաժամկետին հասցնելու խնդիր ու-  
նեցող փակագիր ՁԼՄ-ների թղթակիցները, կարող են զանգահարել խնդրելով ձեզ ար-  
քայապարկ ձեր վերաբերմունքը կամ արձագանքը մի որևէ իրադարձության կամ ինչ-  
որ մեկի մեկնաբանության հանդեպ: Նաճախ նման խնդրանքները հրապարակ որևէ  
լրագրության մասը դառնալու հիանալի առիթ են ձեր կազմակերպության համար:  
Զանգը գուցե եւ ձեզ հանկարծակիի բերի, բայց ձեր ասելիքը կազմակերպելու համար  
մի քանի րոպե ժամանակ խնդրելով՝ դուք կարող եք պարզաճ ու խելամիտ ձեռով պա-  
րասխանել:

Պարզեք լրագրողի անունը, հեռախոսահամարը եւ նյութը հանձնելու վերջին ժամ-  
կետը, ապա հարցրեք, թե կարո՞ղ եք, արդյոք, հեղ զանգահարել մի քանի րոպեից:  
Նանգստացեք: Մտածեք ձեր երեք դրական կետերի մասին: «Նարցազրույցը» բարձրա-  
ձայն խաղարկեք: Ննարավորինս արագ կերպով փողկություններ հավաքեք այդ լրագ-  
րողի, լրագրական կազմակերպության ու ձեր ասելիքի հասցեատեր լսարանի մասին:  
Ապա թղթափեք լարվածությունը եւ անմիջապես հեղ զանգահարեք լրագրողին:

**Ինչպե՞ս սկսել հարցազրույցը.** հարցազրույց վարողը սկսում է ձեզ հարց ուղ-  
ղելով: Իսկ դուք պետք է սկսեք ձեր երեք կետերն առաջ քաշելով: Շարք դեպքերում ձեր  
փրամադրության փակ կունենաք մի քանի րոպե՝ հարցազրույցի սկսվելուց առաջ  
դրանք թղթակցի հեղ քննարկելու համար: Ներկայացրեք պետք է հարցազրույց վարողին  
նախապես ուղարկեք խնդրո առարկային առնչվող ընդհանուր փողկություններ:

Եթե վարողը շարունակ հեռանում է այն հարցերից, որոնց դուք կուզենայիք անդ-  
րադառնալ, ապա քաղաքավարության սահմաններում մնալով հանդերձ հաստատա-  
կամորեն հարցազրույցը վերադարձրեք իր հունը դեպի այն խնդիրը, որին դուք հեղա-  
մուր եք՝ օգտվելով «կամրջող» արքայապետություններից եւ ձեր պարասխանները  
սկսելով, ասենք, այսպես. «Լավ, բայց կարճես թե հարցն իրականում հեղելայլն է...»:  
Իսկ այնուհետև շարադրեք ձեր ասելիքը: Ներկայակ ձեակերպումներից որևէ մեկը  
կարող է ձեզ այդպիսի հնարավորություն փայ.

- \* Թույլ փվեք ավելացնել...
- \* Ինձ հաճախ են հարցնում...
- \* Դա կարող է որոշ առումով ճիշտ լինել, բայց...
- \* Դա իմ մասնագիքական ոլորքից դուրս է, բայց ես հաստար գիքեմ, որ...
- \* Թերեւս ամենակարեւոր հարցը հեղելայլն է...

**Եթե լրագրողը ձեզ այնպիսի մի հարց է փայլա, որին դուք չեք ցանկանում  
պարասխանել,** փորձեք խուսափել դրան պարասխանելուց: Որքան բաց լինեք,  
այնքան լավ: Բայց եթե զգում եք, որ իրոք ի վիճակի չեք պարասխանել փվյալ հար-  
ցին, այդպես էլ ասեք կամ «հեղ լողացեք» դեպի ձեր «ապահով կղզյակները»՝ այն  
երեք հիմնական հարցադրումները, որոնց կուզենայիք անդրադառնալ:

**Եթե լրագրողն անրարյացակամ հարցեր է փայլա,** մի՛ կրկնեք այդ հնչերան-  
գը: Ձեր խնդիրն է՝ հնչեցնել ձեր երեք հիմնական կետերը: Ո՛չ հուզվեք, ո՛չ էլ վիրավոր-  
վեք: Ցանկացած ապարեղեկաքվություն արագորեն ճշրեք եւ ապա առաջ անցեք՝  
ներկայացնելու ձեր դրական հարցադրումներից որևէ մեկը: Պահպանեք ձեր բարյա-  
ցակամությունը: Եթե ձեզ հասցեագրվածը կոշտ քննադաքություն է, ապա կարող եք

